

Մեր ազգին մէջ հին սովորոյթը գրեթէ մինչեւ ժԱ զար պահուած կ'երեւի, միայն կիրակի և շաբաթ օրերն էին ծիսական օրերը: Կը համարիմ, որ ինչպէս Տրուդեան ժողովը սահմաներ էր, հայք կանխապէս կը սրբազործէին ըստ բաւականի կիրակի օրերը այնչափ մասեր, որ բաւէին ամբողջ եօթնեկի մը համար: Կը տեսնուի պատմութեան մէջ ինչ ինչ դէպքերէ, որ սրբոց տօնախմբութեան աւուրց' էին ծիսական օրեր, իսկ պահոց օրերը միշտ կը մնային Ոչ-ծիսականք: Բայց բացառութիւնք պէտք էին գտնուիլ հին ատենն ալ, ինչ որ այժմս կը գործադրուի. ննջեցելոց տեարը եթէ փափագին այգալիսի Ոչ-ծիսական օրերու մէջ իրենց հանգուցեալին թաղման հանդիսին համար խնդրել սուրբ Պատարագի հանդիսաւորութիւնը՝ չէ ժրխտուած: Հայ ծիսին մէջ բուն Ոչ-ծիսական օրն է Աւագ Ուրբաթ օրը, իսկ Աւագ շաբաթը ծիսական է, որովհետեւ երեկոյն կը մատուցուի սուրբ խորհուրդը: Հոովմանեան եկեղեցին հիմալ սակել պարզ կանոնի մը վերածնէր է զայս իրականին մէջ, Այժմ միայն Աւագ ուրբաթ օրը կը մնայ, յորում պատարագ չի մատուցուի: Յիսուսի չարչարանաց և խաչելութեան օրուան յիշատակութիւնն ունենալուն համար, Այս կանոնիս կը հետեւի հայ-կաթողիկէ եկեղեցին, այս բացառութեամբ՝ որ Մենդեան ճրագաւոյցի և Զատիկի իրթման պատարագ եթէ համարինք Մենդեան ղեան և Զատիկի աւուրց սկզբնաւորութիւն՝ ըստ արեւելեան արարողութեան՝ այդ օրերն ալ ոչ-ծիսական կը մնան:

Ո. Կ.

Յ Ո Ւ Բ Ն Լ Ե Ա Ն Բ առը

Առաջ եկած է եօպէլ բառն, որ կը նշանակէ խոյ, իսկ փոխաբերական իմաստով՝ եղբնափող, չեփող: Էրեսայք ամէն յիսուն տարի կը կատարէին իրենց յօրեւեանը, յորում կը ծանուցանէին իրոյի եղբիւրով պարտքերու շնորհում, ընծայուած կամ ծախուած երկիրներու վերագործ առ նախկին տէրերը և գերիներու ազատութիւն: Յետոյ այս հանդէսն անցաւ կաթողիկէ եկեղեցւոյ, պահելով միանգամայն սկզբնական անունը:

ՄՊԱՅԱՆԻ ԶԱՎԱՐՄԱՅԱԼ ԳԱՒԱՌԸ

(Աւագ-Պարթև - Պարթև - Պարթև - Պարթև)

(Շաբ. տես թագմ. 1924, էջ 891)

Զարչարանաց շաբաթի աւագ հիւզարարի օրը. — Այդ օրը եկեղեցում պատարագ է լինում և բոլոր գիւղականները ճաշակում են: Երեկոյեան կատարում է «Ոսնալայի» կարգը: Դոյն երեկոյ գիւղացիները, մանաւանդ կանայք, իրենց հետ կարագ, ձու, խունկ և մոմ առնելով՝ շտապում են եկեղեցի: Ոսնալայից յետոյ օրհնած կարագը հէց եկեղեցում բաժանում են ժամաւորներին, որոնք, հայկական սովորութեան համաձայն, քսում են երեսներին և ձեռքերին. մնացեալ կարագը և ձու, որ մօտաւորապէս հարիւրի է հասնում, տալիս են քահանային, իսկ խունկ ու մոմը՝ եկեղեցուն:

Հետաքրքրական է նաև այն, որ աւետարանի ընթերցանութեան ժամանակ քահանային նստեցնում են մի քուրսու վրայ և 5-10 երիտասարդներ ծայրերից բռնելով՝ բարձրացնում են օդի մէջ. քահանան երեսը նախ դէպի արևմուտք, ապա դէպի արեւելք դարձած կարող է և աւետարանը և «կեցոն» ասում: Գիւղացիները փոխաբերական մազով բացատրում են, թէ Յիսուս բարձրանում է Ձիթենեաց սարը: Այս սովորութիւնը հետզհետէ վերանում է:

Զարչարանաց շաբաթի աւագ ուրբաթ գիշերը. — Աւագ ուրբաթ գիշերին տեղացիները կոչում են «Յուրթի Ուրբաթ»: Այդ գիշեր գրեթէ բոլոր գիւղացիները գնում են եկեղեցի, ուր քահանան, ժամեղգութիւնից յետոյ, չորում է գետնի վրայ և մելամաղձոտ ձայնով կարող է «ոլը», որի ժամանակ ծեր կանաչեցի և տղամարդկանցից շատերն արտասում են: Լուսադէմին կանայք գնում են գերեզմանատուն և իրենց հին և նոր ննջեցեալների համար պաշտում են կատարել տալիս: Այժմ Զատիկի երկուշաբթի օրն են գնում գերեզմանատուն:

«Ճրագալոյց». — Տեղացիներն ասում են «ճրագալոյց» կամ «թաթախ իրիկուն»: Շաբաթ առաւօտեան քահանան գիւղի տները համապատասխան նշխար պատրաստելով՝ երեք-չորս աշակերտների ձեռքով բաժանում է ժողովուրդին. ստացողը բաժանող-աշակերտին մի ձու է տալիս, որ պատկանում է քահանային: Երեկոյան բոլոր գիւղացիները շտապում են եկեղեցի: Ա-

առջնորդ պատարագի ժամանակ, երբ քահանան տառամ էր «սա է կենանք», բոլոր ժամաւորները ծափ էին տալիս, իբր թէ պատը մինեւ է. այժմ այս սովորութիւնը վերացել է:

Ուշադրութեան արժանի է այն, որ այդ օրը, ցերեկ ժամանակ, բոլոր տներում ճրագ են վառուում, և երբ եկեղեցուց վերադառնում են տուն, սեղանի ճրագը վառում են յիշնալ ճրագով: Թէ ինչու այդ օրը ճրագ են վառում, այդ մասին զիւղացիների մէջ ոչ մի աւանդութիւն չկայ:

Այդ երեկոյ ընթրում են ձու և փլաւ, իսկ միս և պանիր չեն ուտում, որովհետեւ «Նաւաւ կատիր» է:

Նոյն երեկոյ քահանան շրջում է «դարձաւ տներ», այսինքն չորս կամ հինգ ամուսնայիններ, ցեալ ունեցողների տները և միաթաղում:

Ձատիկ. — Գիշերը շուտով քնում են: Կէս գիշերին տիրացուն հնչում է կոշիկով. և ահա բոլոր զիւղականներն էլ շտապում են եկեղեցի, ուր երեխաներն իրենց անկարգութիւններով ահազին աղմուկ են բարձրացնում: Նոյն գիշերը նորահարսները, ջահէլ աղջիկներն ու երեխաներն իրենց հետ մոմեր են բերում և Ս. Յաւութեան հանդիսից յետոյ երկերկու մօտենում են Ս. Աշին, հակիրթները դնում սեղանի վրայ, ապա ջերմեռանդութեամբ համբուրում Աջը և ձեռնամաձ երեք անգամ ասում են.

Ձեզ և մեզ մեն անեմք,
Գրիստոս յարեաւ թ մեռելոց:

Հակիրթները, որ մօտաւորապէս 150ի են հասնում, պատկանում են չափիկ հագնող աշակերտներին: Պատարագից յետոյ ժամաւորները ցրւում են տները և ճաշում, ուտելով ձու և փլաւ:

Ամէն տուն ջատկայ առիթով ձու է ներկում կարմիր, կանաչ, կապոյտ և դեղին գոյներով, հարուստ տները ներկում են 100-200 ձու:

Ուշադրութեան արժանի այն է, որ ջատկայ ամբողջ շաբաթը երեխաներից սկսած մինչեւ ծերունիները համախմբւում են փողոցները և վճզով (ճանով) ձու խաղում: Մի տեղ 10-20 երիտասարդներ գետնի վրայ ծալապատիկ նստած շրջան են կազմում. նրանցից մինը իր ձեռքում ունեցած չորս ճանիւրից մէկը ֆառ (վիճակ) է զգում. ֆառն ում որ ընկնում է, նա է առնում ճանը, որի տափակ մի երեսը կոչւում է «Ղիթ» և միւս երեսը «Բօջ», իսկ երկուր մի երեսը կոչւում է «ձի», միւս երեսը «էշ»: Զանաւորը կարգով գրոււ է բռնել տալիս: Շրջանի առաջին երիտասարդը ձեռքին 2-4 ձու բռնելով՝

ճանաւորով տառամ է. «Քցէ բուռս վիրն էրթա»: Դրա վրայ ճանաւորը ձեռքի չորս ճաները միաւ, սին զգում է օդի մէջ. եթէ մի ձի է գալիս, ճանաւորն առնում է ձու բռնողի ափի մէջ եղաւ. ծը. եթէ երկու կամ երեք և կամ չորս ձի է գալիս, ստանում է եռապատիկ և քառապատիկ. իսկ եթէ մի էլ է գալիս՝ ճանաւորը նոյնապի ձու է տալիս ձու բռնողին և ճաներն էլ յանձնում է իր աջ կողքի երիտասարդին: Եւ այսպէս հերթով շարունակւում է: Մի այլ տեղ երկու հոգի ձեռքերով ֆառ են զգում. ում որ ընկնում է ֆառը, նա բռնում է ձեռքի ձուն, սուր ծայրը վերեւ ուղղած, այսինքն «պառկում» է, իսկ միւսն իր ձի սուր ծայրով խփում է պառկողի ձի գլխին: Ում ձի երկու ծայրն էլ կտրւում է, նա տարւում է: Մի այլ տեղ 10-20 հրիտաւ սարդներ համախմբւած «առիստայ» են խաղում. նրանցից մէկը նստում է գետնին և կապալի գոգը բանում ծնկների վրայ, իսկ միւս հրիտաւ սարդները մի-մի ձու յանձնում են նրան, սա բոլոր ձեռն ուղղածից շարում է զոգը կամ գետնի վրայ: Այսուհետեւ ձեռքով ֆառ են զգում. ում որ ընկնում է ֆառը, նրան է պատկանում ամենաառաջին ձուն, որով նա կուտւմ է միւս ձեռքի հետ, և եթէ կտորոտւմ է միւս ձեռքը, յաղթող է հանդիսանում, իսկ եթէ ոչ՝ յանձնում է յաղթողին: և այսպէս շարունակւում է: Վերջում ում ձուն որ յաղթող է հանդիսանում, նրան են պատկանում բոլոր ձերքը:

Այս շաբաթայն ընթացքում զիւղացիները շրջում են միմեանց տները և շնորհաւորում ջատկեր. «Ջատիկդ շնաւոր ըլնի, ուրախ հասնէք սուրբ Համբարձման», որին պատասխանում են. «Շնորհակալ եմ, ձերն էլ շնաւոր ըլնի»:

Նոյն շաբաթայն մէջ քահանան շրջում է բոլոր տները և օրհնում:

Հետաքրքրական է այն, որ ջատկից սկսած մինչև համբարձում, կանայք եկեղեցու օկոգերից յետոյ կար չեն աւում, որովհետեւ հաւատում են, որ եթէ կար անեն, տան հաւերը «հակուր» կ'լինեն, այսինքն կ'կուրանան:

Համբարձում. — Համբարձում է: Ամբողջ զիւղը, նա մանաւանդ երիտասարդները, ջահէլ աղջիկներն ու հարսները ուրախութեան մէջ են:

Համբարձման Զորեքշաբթի օրը բոլոր տներում զաթայ և բաղալ են թխում, ձու ներկում, սեր և կարագ պատրաստում: Նոյն երեկոյեան զիւղի բոլոր ջահէլ աղջիկներն ու հարսները խմբեր կազմած գնում են մօտակայ սիգաւէտ գաղտնիքը գրօսելու. այնեղ գայնազոյն անուշահոտ ծաւ

դիկներ են քաղում, փնջում, երգում և ուրախանում, ապա խմորին վերադառնում են ստուն: Հետեւեալ օրը, հինգշաբթի առաւօտեան շատ վաղ շատ տներում նորից թազայ քաթայ և բաղաշ են թխում, փլաւ եփում. ապա եկեղեցուց յետոյ, բուրն էլ՝ կին, հարս, աղջիկ, ծեր, երբ տասարդ, երեխայ զտւում — զարդարած, յըստում են ձկների և էշերի վրայ և ուրախ երգելով, խնդալով, խաղալով դիմում են սարը՝ ուր զանազան խմբեր կազմած՝ ուտում են, խաղում, պարում, երգում և մինչև երեկոյ քէֆ ու ուրախութիւն անում: Այդ օրը բանաստեղծական մի պատկեր է ներկայացնում սարը: Այստեղ երբ տասարդներէից ոմանք ձիավարքով թխին են աւնում, ոմանք հրացան արձակում. այնտեղ զօտեմարտում են և զանազան խաղեր սարքում: Մի այլ տեղ ուրախ չրջան բողբոսած՝ ուտում են, խմում են երգում: Մի քիչ հեռու հնչում է սազ ու դափը, և կանայք չրջան կազմած «Շանիման» են պարում. նրանք ոտքերն երկու անգամ դէպի առաջ են մղում և մի անգամ յետ, ապա ձեռները բաց են թողնում և երեք անգամ ծափ տալով՝ երկու կամ երեք ոտք դէպի աջ են պատում և այսպէս շարունակում մօտաւորապէս կէս ժամ: Մի ուրիշ տեղ 20-30 երիտասարդներ կամ կանայք ձեռքերին երկու թաշիկնակներ առած, սազ ու դափի ծուլոցի համաձայն «չուփ» են պարում. նրանք ձեռները տարաւում են և օդի մէջ շարժելով թաշիկնակները, ոտների շարժումների հետ զանազան ձևեր են տալիս: Մի այլ տեղ «Շրբօղայ» են պարում. շորս հոգի խաչաձև բռնում են միմեանց ձեռները, յետոյ բաց են թողնում և խաչաձև թև թևի գցում, երեսները փոխում, մէկը զնում է դէպի աջ, իսկ միւսը՝ դէպի ձախ. յետոյ ձեռներով զարկում են իրենց սաղորների կողերին և երեք անգամ ծափ տալով՝ մօտենում են միմեանց և նորից թև թևի տալիս և այսպէս շարունակում են ուղիղ կէս ժամ. սկզբում պարում են շատ կամայ, յետոյ հետզհետէ արագացնում են, որով առաջ է գալիս մի գեղեցիկ ներդաշնակութիւն, համաչափութիւն: Մի ուրիշ տեղ գիւղացիները խմրովին նստած՝ լսում են իրենց սիրելի աշուղին, որ

չօնգուռը հպարտօղէն կրծքին դրած, ման է գալիս հանդիսականների մէջտեղը և պատմում է ու երգում «խան չօրանից», «խան ասկէրից» և ժողովրդի սիրած հին իդիթներէից: Հաւ մերթ զարկում է չօնգուռի լարերին և քաղցր ու դուրեկան ձայնով երգում երկու ջահէներին սիրոյ հրդը. մերթ ձեռքի որոշ շարժումներով պատկերացում է նկարագրած իդիթներին և նրանց, ցով ոգևորում հանդիսականներին, որոնք յաւփրշաւակած աշուղի սազով՝ մերթ խնդում են և ուրախանում, մերթ տխրում են ու հառաչում: Այսպէս ամեն կողմ խնդում են սրտերը, թնդում երգերը, մինչև երեկոյ:

Այս գաղթական հայութեան մէջ վիճակ հանելու և ջանգելւումով ծաղիկ զովելու գեղեցիկ սովորութիւնը չկայ:

Ուշագրութեան արժանի է այն, որ նոյն օրը նշանւած աղջիկներին և նորապսակներին նէրներն են ուղարկում սկեսրանց տանից:

Հոգեզայուտ. — Տեղական բարբառով սուտ են «Գալստան կիրակի», որի առիթով մի առանձին ծէս չեն կատարում, միայն հինգ օր պատ են պահում, որ կոչւում է «Գալստանի պատ». եկեղեցում պատարագ է լինում:

Լուսաւորի ճշխարաց գիտը. — Լուսաւորի պատի առիթով, հինգ օր պատ են պահում, որ իրենց բարբառով կոչւում է «Գարնիշի պատ»: Չեն տօնում, միայն Շաբաթ օրը եկեղեցում պատարագ է լինում:

Վարդապաճ¹. — Այս տօնին ասում են «Վարթիոր» և կիրակէ առաւօտեան բուրն էլ շտապում են եկեղեցի, ուր սեղանի առաջ դնում են ջրով լիքը և մի աման, որի մէջ իջնելում են մի մեծ փունջ դալար խոտ: Քահանան օրհնում է ջուրը: Ժամբարգութիւնից յետոյ նա օրհնած ջրաւանը դնում է զբարակալի վրայ, աւետարանի մօտ: Եւ երբ ժամաւորները համախմբւում են, որ համբարանի աւետարանը քահանան փունջը հանում է ջրի միջիցը և սրկում ժողովրդի վրայ: Այժմ այս սովորութիւնը վերանալու վրայ է: Անուհետեւ երեխաները մի — մի փոքր ջրաման առնելով՝ ընկնում են փողոցները, մի-

1. Շատ անգամ մի քանի գիւղերի, օր. Աղբուրդի, Սինգաւնի և Մամառնի գիւղացիները միացած են տօնում Համբարձումը: Ա. Ե.

2. Հիմա՞նու հայերն ունէին մի շուրջ չատաւածներ՝ Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Նանէ, Միւր, Տիւր, Վառզան և այլն. սրանցից Անահիտ ղեցուհու էր նախ:

բաժն Վարդապաճը: Նրա սկիզբն արձանները կանգնեցրած էր Հայաստանի Երեւա, Աշտիշա, Արի և Բազաւան քաղաքներում: Հիմա՞նու հայերը ամեն առիթ, օգոստոս 10ին, տօնում էին նրա ամը. այդ օրը վարդերով զարդարում էին նրա սկիզբայ արձանը և մի-միանց վրայ վարդաշուր օրակում և պարում: Ա. Ե.

մեանց վրայ «լուծիք» անում, այսինքն շուրջ սրտկում և ուրախանում:

Հոյն օրը նշանածները փայ են տանում իրենց նշանածներին:

Վերափոխումն Ախտաժառանգի. — Այդ օրը եկեղեցում խաղող են օրհնում և շատերն էլ մառառազ անում: Մատաղատերը Շաբաթ երեկոյան մի ոչխար է տանում. եկեղեցու բակում մորթում են ոչխարը, որի ծոռները (աջ ոտը կոչում է «էրի»), կաշին և զլուխն ուղարկում են քահառային ասելով.

Էրին, էրին

Տուր տերտերին:

Իսկ ծնացեալ մասը տուն բերելով եփում, մաս մաս անում, ապա «շամբը» լցնելով՝ դրնում «մաշիմի» մէջ և բաժանում զբացիներին, որոնք մատաղն ստանալով ասում են. «Ղաբուլ ընի, Աստած ձեք սրտի խորուրթը տայ»:

Սուրբ խաչ. — Կիրակի օրը մատաղ են առնում և բաժանում ժողովրդին, իսկ Երկուշաբթի առաւօտեան գիւղի բոլոր կանայք գնում են գերեզմանատուն և օրհնել են տալիս իրենց հին և նոր նշնեցեալների գերեզմանները. քահանային աջամբողք են տալիս մեղր, խաղող և այլն:

Այս օրանք են Սպանիի Զահարմահալ գաւառի հայ գիւղացիութեան նշանաւոր տօները, որոնք օրըստօրէ, կենքի պայմանների և շրջապատի ժողովուրդների անխուսափելի ազդեցութեան ներքոյ, պակասում են, մաշում, կերպարանափոխում և զոհ գնում ժամանակի կանոնող ժանիքներին:

Վիլննա

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

22 Ապրիլ 1928

Վ Ե Ր Ջ

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵՍ ՊԱՆԴՈՎԱՐ

Նիւ Երրբի «Քենսիդաւսիա փալատ»ն է, որ միաժամանակ տեղ կրնայ տալ 10,000 հոգւոյ: Ունի 12 վերելակ մարդու և 18 հատ ալ՝ բեռներու փոխադրութեանց համար, ինչպէս նաև 3340 հետախօս գործի. լուսաւորութեան համար ալ՝ 18,000 էլեկտրական կանթիլներ: Մէջը կան նաև լուրջական երկու խոշոր բարդներ՝ լողալու առանձին աւազաններով, Պանդոկին մէջ կը հրատարակուի օրաթերթ մ'ալ, որ առտուններ ձրի կը բաշխուի սենեակները:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐԲ

Ս. ՂԱԶԱՐՈՒ

(Շար. տես Բազմավէպ, 1926 էջ 88)

ԼԵ.

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՆՆԱՅ ԴԱՅԵԱԿ

Ձեռագիրս թէնւ պարզ ժողովածու մ'է այլեւայլ բժշկարաններէ, բայց արժանի կը համարիմ մասնաւոր ուշադրութեան, այն պատճառաւ՝ որ անոր շնորհիւ Հայունի մը բժշկութիւն ըրած է նախանցեալ դարու սկիզբները, Այդ Հայ բժշկունհին է՝ ԱՆՆԱՅ ԴԱՅԵԱԿ՝ Ի ԲԻՎԷՄԷԹ ԳԻՒՂԷ, մականուանեալ ԶԵՅԵՄԵԱՆ:

Ս. Ղազարու այս ձեռագիրը սակայն բուն Աննայի սեպհականը չէ, այլ ընդօրինակութիւն մը, զոր 1885ին կատարած է Բերանի մէջ Աւետիս Ղազարեան:

24 հարիւրորդամեղը մեծութիւն ունի այն, 17 հարիւրորդամեղը լայնութիւն և 1,5 հարիւրորդամեղը թանձրութիւն, և կը կրէ 1931 թուահամարը:

Լաւ կազմուած հատոր մ'է. կը բաղկանայ 204 էջէ, և 102 թերթէ. թուղթը արդի սովորական թուղթերէն է. գիրը շեղագիր և անվարժ:

✱

Իրբեւ բժշկարան մեծ արժէք մը չի ներկայացներ. և ինչպէս արդէն ըսի, կատարեալ ցաղումով մ'է այլեւայլ ծանօթ բժշկարաններէ:

Սկիզբի 12 էջերը ճալինոսէ (Գաղիանոս) առած բժշկա-առողջապահական խրատներ են, իսկ ծնացածները բոլորն ալ Ամիրոտովաթէ կամ Ասարէ հաւաքուած դեղերու ամփոփում մը, որու շնորհիւ Աննայ դայեակ իւր բժշկութիւնը կ'ընէ եղեր Գիրմէթ Գեղի մէջ (Պանտրամ):

Աւելորդ կը համարիմ մանրամասն իւս. սիւ այս դեղերուն վրայ, որոնք կը վխտան մեր բոլոր Հին բժշկարաններուն մէջ. ինձ համար հետաքրքրականը բժշկարանիս Յի-